ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«____» _____ 201 թ.

No _____

ՀՀ ՊԵԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ի լրումն 28.03.2019թ-ի թիվ Ն/17-2/18253-2019 գրության

Հարգելի պարոն Գևորգյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ Ոստիկանության ՊՊԳՎ ԿՕ և ՀՁՊ գնդի միջև 13.03.2019 թ-ին կնքվել է N19/1 վարչական ակտը, համաձայն որի սույն թվականի ապրիլի 1-ից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ք. Երևան Մ.Խորենացի 7 և Մ.Խորենացի 7Ա մասնաշենքերում պահպանության ծառայության մատուցման ամսական վարձավճարը կազմում է՝ 1900,0 հազար ՀՀ դրամ նախկին 1480,0 հազար ՀՀ դրամի փոխարեն՝ այսինքն 2019 թ-ին տարեկան վճարման գումարը կկազմի 21540,0 ՀՀ դրամ (1480,0x3+1900,0x9), որից պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին 2320,0 և արտաբյուջետային միջոցների հաշվին 19220,0 հազար ՀՀ դրամ:

Ուստի ՊՊԳՎ ԿՕ և ՀՁՊ գնդին վճարում իրականացնելու նպատակով խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4217 «Արտագերատեսչական ծախսեր» հոդվածով ապահովել համապատասխան դրական եզրակացություններ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2015թ-ին կնքված թիվ 01 վարչական ակտի շրջանակներում արտաբյուջետային միջոցներով առկա է 17760,0 հազար ՀՀ դրամի դրական եզրակացություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀՀ ՊԵԿ ՖԻՆԱՆՍԱՀԱՇՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ Ժ/Պ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ ֆինանսական բաժնի
գլխավոր մասնագետ՝ Հ. Ղազարյան
Հեռ. 060-544-683